

ԵՐԱՆԵԼԻ Է ՆԱ, ՈՎ ՀԱՎԱՏՈՒՄ Է

Հասարակության պառակտումը թշնամական հակասություններ է առաջացրել իշխանավորների և հասարակության ճնշող մեծամասնության միջև, որն, առաջին հերթին, արտահայտվում է հավատի ու վստահության բացակայությամբ կառավարության և քաղաքական ցանկացած կառույցի նկատմամբ:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների կենսագործման հարցերին նվիրված իր ելույթում ՀՀ նախագահը նշեց. «Մենք պարտավոր ենք հասնել սոցիալական համերաշխության երկրի ներսում: Սոցիալական խնդիրները սերտորեն կապված են արդարության հետ, և մենք պարտավոր ենք էապես բարձրացնել հասարակական հարաբերություններում արդարության հաստատման գործընթացի տեմպը»:

Նախագահ Ս. Սարգսյանի ելույթը ծրագրային էր: Նա շեշտը դրեց ապագայի գլխավոր խնդիրներից մեկի՝ «հասարակության մեջ սոցիալական համերաշխության» հասնելու վրա:

Սակայն հարց է ծագում. «Ինչո՞ւ այդ հարցը չէին «տեսնում» նախորդ նախագահները, այդ թվում հենց նախագահ Սարգսյանը»:

Նրանք տեսնում էին և գիտեին հասարակության մեջ այդ պառակտման մասին, սակայն ցանկացած իշխանության պարադիգման՝ պայքարն է հանուն իշխանության, ավելի կոնկրետ՝ քաղաքական հավակնությունների գերակայությունը սոցիալական խնդիրների լուծման նկատմամբ: Նման պարադիգմայի դեպքում ընտրվում և ամրապնդվում է այն հասարակական-քաղաքական վերնախավը, որը նպաստում է անձնական իշխանության ամրապնդմանը, իսկ մնացած բոլոր հիմնախնդիրները՝ միայն «բարձրագույն կարգի ածանցյալներ» են, որոնք խլացվում են այնպիսի լոզունգներով, ինչպիսիք են՝ «մենք շրջափակման մեջ ենք», «պայքար խորհրդային անցյալի ժառանգության դեմ», «ամեն ինչ մեր անկախության պաշտպանության համար է», «մեր զրկանքները՝ մեր արտաքին թշմանիների խարդավանքներն են» և այլն:

Հավանաբար, «սոցիալական համաձայնության և արդարության» բացակայությունը բնակչության արտագաղթի հիմնական պատճառներից մեկն է:

Ծանոթագրություն. 1. Տեր-Պետրոսյանի իշխանավարության ժամանակ, ըստ սոցիոլոգ Ս. Ադիրեկյանի, երկիրը լքել է 1.5 մլն մարդ (պաշտոնական տվյալներով՝ 585 հազ. մարդ), Ռ. Քոչարյանի ժամանակ՝ մոտ 130 հազ մարդ, իսկ Ս. Սարգսյանի ժամանակ մեր արտագաղթած հայրենակիցների թիվը կազմել է շուրջ 260 հազար:

2. Բագրատյանին, երկրի վարչապետ եղած ժամանակ, մեղադրում էին, որ իր տնտեսական քաղաքականությամբ նա նպաստեց երկրից «ուղեղների արտահոսքին»: Հ. Բագրատյանը առարկում էր՝ պնդելով, որ միայն մի ակադեմիկոս է լքել երկիրը:

Վարչապետը չէր գիտակցում, որ երկիրը լքում է հասարակայնորեն պահանջված մարդկային ներուժը, որը սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական, կազմակերպական կառավարման տեխնոլոգիաների հսկայական ոլորտի հիմնական բաղադրիչն է: Երկրի այդ ներուժը, որը կրողն էր բազմաթիվ սերունդների կողմից կուտակված որոշակի գիտելիքների, հոգևորի և աշխատանքային փորձի, փաստորեն, կորած է Հանրապետության համար:

Հանրապետությունն իր անկախության ժամանակաշրջանում կորցրեց և շարունակում է կորցնել ոչ թե իր բնակչության հասարակ մասը, արտահայտված վիճակագրության թվաբանության մեջ. այն կորցնում է իր ապագան: Դա այն մարդկային ներուժն էր, որն իր պրոֆեսիոնալ, բարոյական հատկանիշներով որոշակի առումով ձևավորել էր ազգային վերնախավը: Դա հասարակության այն հատվածն էր, որ դաստիարակել և պաշտպանել էր ամբողջ հասարակությունը:

Ներկայումս ստեղծել ենք հասարակության վերնախավ, որը չունի հոգևոր արժեքներ, նրանց տվել ենք օրենքից բարձր լինելու իրավունք, դրա դիմաց ստանալով կասկածելի անձնական հավատարմություն՝ հիմնված կորպորատիվ, ընտանեկան, կլանային համերաշխիք (խմբական երաշխավորություն), հովանավորչության, ամենաթողության և կոռուպցիայի վրա:

Ծանոթագրություն. «Մենք պարտավոր ենք ստեղծել այնպիսի հասարակական միջավայր, որտեղ չեն լինի արտոնյալներ, այլ կլինի միասնական ժողովուրդ՝ կարգապահ, օրենքները հարգող, խաղաղություն սիրող, հպարտ»: ՀՀ նախագահ Ս. Սարգսյան (մեջբերում վերոնշյալ ելույթից):

Հնարավոր է արդյոք այս դրույթի իրականացումն առնվազն հաջորդ տասնամյակի ընթացքում, հասարակության մեջ ներկայումս առկա բարոյական մակարդակի, ինչպես նաև հասարակական-քաղաքական վերնախավի ճնշող մեծամասնության պրոֆեսիոնալ հատկանիշների պայմաններում:

Այս հարցը ենթադրում է բացասական պատասխան, քանի որ երկիրը ուշացել է որակապես նոր մարդկային ռեսուրսների պատրաստման գործում, իսկ փոխարինել բոլոր մակարդակներում հին ղեկավար կադրերին իրենց կորպորատիվ, ընտանեկան, կլանային կապերով և ստրկական հավատարիմ ծառայությամբ, հնարավոր չէ, առանց հասարակական, սոցիալական պայթյուն առաջացնելու:

Ի հայտ է գալիս հետևյալ երկրնտրանքը. կարո՞ղ է արդյոք մեր հասարակությունը, առկա սոցիալ-տնտեսական, ցեղային և կլանային-կորպորատիվ հարաբերությունների պայմաններում, կրթել միջին քաղաքացուն (համայնքի անդամին)՝ ունակ լուծելու գիտակցության և զգացմունքների միջև գոյություն ունեցող իր անձնական հակամարտությունները՝ ճշմարտությունը որոշելու համար:

Վերացական մոտեցման դեպքում կարելի է դրական պատասխան տալ: Որպես համոզիչ օրինակ կարող են ծառայել Երրորդ հանրապետության «հիմնադիր հայրերի»

զանազան ամբոխահաճո հայտարարությունները: Սակայն յուրաքանչյուր մարդու կյանքը մեր խիստ համակարգված հասարակության ստորին աստիճաններում ցույց է տալիս հակառակը:

Որպես օրինակ կարելի է բերել ՀՀ վարչապետ Հ.Աբրահամյանի խոսքերը Գառնի գյուղի բնակիչների հետ հանդիպման ժամանակ, որոնք փակել էին մայրուղին՝ բողոքելով Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցման դեմ: Պարզվում է, որ նա տեղյակ չէ խնդրին: Նույնիսկ առանց անդրադառնալու այս պատասխանի բարոյական կողմին/բաղադրիչին, հարց է ծագում նման բարձր մակարդակի ղեկավարի պրոֆեսիոնալիզմի մասին: Ինչպիսի՞ն կարող է լինել իրավիճակը, երբ վարչապետը ծանոթ չէ այս նախագծի իրականացման պայմաններին:

Ծանոթագրություն. Հայտնի ֆրանսիացի օվկիանոսագետ և ճանապարհորդ Ժակ Իվ Կուստոն, մեղմ ասած, չսիրելով կոմունիստներին և սոցիալիստական ճամբարի երկրների ղեկավարներին, մեծ հարգանք էր տաժում Կուբայի Հանրապետության առաջնորդ Ֆիդել Կաստրոյի հանդեպ: Կուստոն ապշած էր Ֆ.Կաստրոյի՝ Կուբայի ամենահեռավոր մարզերի գյուղացիների կարիքների մասին իրազեկվածության և նրանց կյանքին մասնակից լինելու հանգամանքով... Այդ սերն ու հարգանքը իր ժողովրդի (ոչ թե վերացական հասկացության) հանդեպ օգնեց Կուբային դիմակայել բազմաթիվ ներխուժումներ:

Նոր խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության ընդունման, Ընտրական օրենսգրքի հանրային քննարկման և հաջորդ նախընտրական քարոզարշավների նախապատրաստման կապակցությամբ, առաջին հերթին, վերին էշելոններում ապրիլյան ճգնաժամով պայմանավորված, կրկին աշխուժացել է կոռուպցիայի դեմ պայքարի պետական քարոզարշավը:

Իր բարի մտադրությունների հաստատման նպատակով Կառավարությունը հայտարարեց ծառայողական 797 ավտոմեքենայի կրճատման մասին:

Ծանոթագրություն. Ըստ գոյություն ունեցող վարկածի՝ ՀՀ կառավարությունը դուրս է գրել հիմնականում օգտագործման համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցները: Կարծում եմ, որ այս վարկածը ճշմարտանման չէ, քանի որ մեր հայրենական չինովնիկը ձեռքից բաց չի թողնի այս ակցիայից համապատասխան «յուղոտ կտորն» ունենալու հնարավորությունը:

Թվում էր, թե մեր հայրենակիցները պետք է ողջունեին իշխանության այս գրեթե հեղափոխական քայլը: Սակայն հարց է ծագում. իսկ ինչքա՞ն էր նստում հարկատուի վրա չինովնիկների այս շքեղությունը: Եթե ընդունենք, որ բիզնես կարգի միջին ավտոմեքենայի արժեքը կազմում է մոտ 30 հազար դոլար, ապա այդ հաճույքի վրա մենք ծախսել ենք գրեթե 24 մլն դոլար, չհաշված ծառայության և վառելիքի վրա կատարված ծախսերը: Թվում է, թե 24 մլն դոլարը մանրուք է մոտ 5 մլրդ դոլարի պետական պարտքի համեմատությամբ, սակայն Կառավարությունը միջոցների բացակայության

պայմաններում ձախողեց բնակարանային շինարարությունն աղետի գոտում, 2009 թվականից սկսած պետբյուջեում գումարներ չեն նախատեսվում մի շարք բնակարանային կոոպերատիվներում ապագա բնակարանների տերերի կողմից ներդրված գումարների փոխհատուցման համար. Էկոնոմիկայի նախարարությունում պարբերաբար գումարները չեն բավականացնում նորարարական տեխնոլոգիաների պահպանման, զարգացման համար և այլն: Կարելի բազում օրինակներ բերել, սակայն խնդիրը դա չէ...

Հարցի էությունն այն է, որ ամեն տարի իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերը «մանրակրկիտ» կերպով դիտարկում և քննարկում են երկրի բյուջեն և դրա կատարումը, իսկ իրականում ոչ ոք անձնական պատասխանատվություն չի կրում համապատասխան բյուջեի որակի և կատարման համար:

Պարզապես, «անհրաժեշտ պահին» այս կամ այն բարձրաստիճան պաշտոնյան գնում է դեպի «ստվեր» (խորհրդականների ինստիտուտ), իսկ որոշակի ժամկետի լրացումից հետո կրկին հայտնվում է մեկ այլ որակով:

Նախագահի ելույթում մեկ այլ կարևոր դրույթ է հետևյալ հայտարարությունը. «...Հայաստանի քաղաքական համակարգը կդառնա առավել բաց, ճկուն և ներքուստ բարդ ...»: Սակայն, հիմքը, որի վրա պետք է կառուցել երկրի ապագա քաղաքական համակարգը՝ այն քաղաքական դաշտն է, որը ներկայումս ներկայացնում է «իշխող կուսակցությունը» և խորհրդարանական ընդդիմությունը:

«Իշխող կուսակցությունը» գործնականում գերիշխում է երկրի քաղաքական, հասարակական և տնտեսական կյանքում: Այն առավել հզոր, կազմակերպված և կորպորատիվ միավորված քաղաքական ուժն է: Նրա համար «սարսափելի» չեն խորհրդարանական ընդդիմության ելույթները, որի գործունեությունը խորհրդարանում կառուցողական բնույթ չի կրում: Ընդդիմությունը անդեմ, անսկզբունքային է, և իր ղեկավարների անձնական հավակնությունների շնորհիվ, ընդունակ չէ միավորվել ցանկացած, քիչ թե շատ կարևոր հարցի շուրջ:

Առանց անձնական պատասխանատվության ինստիտուցիոնալ համակարգի (դատաիրավարական և էթիկայի առումով), մենք չենք կարող հաղթահարել մեր դժվարությունները սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական ոլորտներում:

Պարոնայք չինովնիկներ, բացի վերոնշյալից, անհրաժեշտ է փոխել հասարակության արժեքները, և յուրաքանչյուրը պետք է սկսի հենց իրենից:

Լևոն Ներսիսյան

Սախարովի կենտրոնի տնօրեն